ԼԵԶՎԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՄԱՌՆԵՈՒԼԻԻ ՇՐՋԱՆԻ ՀԱՅԱԲՆԱԿ ԳՅՈՒՂԵՐՈՒՄ (ԿԱՐՄԻՐ ԳՅՈՒՂԻ ՕՐԻՆԱԿՈՎ)*

DOI: 10.54412/2738277X-2021.1-117

Միքայելյան Տիգրան
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ,
գիտաշխատող. mtigran2002@yahoo.com

Բանալի բառեր. հայեր, հայերեն, Մառնեուլի, Կարմիր գյուղ, Մամեյ, հայաբնակ, Վրաստան։

Վրաստանի Քվեմո Քարթլի երկրամասի Մառնեուլիի մունիցիպալիտետը (շրջանը) գտնվում է Վրաստանի Հանրապետության հարավարևելյան մասում, այն մի կողմից սահմանակից է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզին, մյուս կողմից՝ Ադրբեջանի Հանրապետությանը։

Մառնեուլի շրջանով է անցնում Հայաստան-Վրաստան սահմանի վրացական մասում գտնվող Սադախլո անցակետը։

Մառնեուլի շրջանը մաս է կազմում պատմական Հայաստանի Գուգարք նահանգի Ծոբոփոր գավառի[1]։ Այս շրջանն ավանդաբար բազմազգ է. մեծամասնություն են կազմում ադրբեջանցիները (բնակչության թվի 83,77%), վրացիները (8,58%), ապրում են նաև հայեր, ռուսներ, հույներ, ասորիներ և այլն։ Հայերը կազմում են բնակչության 6,99%, նրանց թիվը 7291 է՝ 2014 թ. Վրաստանում անցկացված մարդահամարի համաձայն[2]։

Մառնեուլի շրջանում կան լիովին հայաբնակ մի քանի գյուղեր՝ Ախքյորփի, Չանախչի, Կուդրո, Գյուլլիբաղ, գրեթե ամբող-

---

* Ներկայացվել է 30.07.2021, գրախոսվել՝ 20.08.2021։

[1] **Ռ.Մաթևոսյան**, Ծոբոփոր, *Հայկական սովետական հանրագիտարան*, հ.5, 1979, էջ 133։

[2] http://pop-stat.mashke.org/georgia-ethnic-loc2014.htm

ջապես հայկական՝ Խոխմելի (հայերն այստեղ կազմում եմ 95%), Բրդաձոր (հայերի տոկոսը՝ 91%)[3]:

Ամբողջապես հայաբնակ գյուղերի շարքում է նաև Սադախլո-Թբիլիսի մայրուղուց մոտ 1,5 կիլոմետր և հայտնի Շահումյան ավանից 7 կմ հեռավորության վրա գտնվող Կարմիր գյուղը: Մայրուղուց հեռու գտնվելու և ճանապարհային ցուցանակի բացակայության պատճառով գյուղն անհայտ է մնում շատերին:

Գյուղը միշտ մնացել է հայաբնակ և հայախոս. այստեղ խորհրդային տարիներից գործում է հայկական դպրոց:

Գյուղը 19-րդ դարի վերջին հիմնադրել են Արազդայան (այժմ՝ Երասխ) բնակավայրից գաղթած հայերը, որոնք էլ հիմնվել են Երասխում՝ ըստ ավանդության գալով Ուրմիա լճի ափերից: Գյուղի բնակիչները քաջատեղյակ են իրենց բնակավայրի հիմնադրման պատմությանը: 19-րդ դարի վերջին Երասխ գյուղի ավագները, որոնց մեջ տողերիս հեղինակի նախապապ Ամիրխան Միքայելյանը (Միխայլյանը) դիմում են Ալեքսանդր Մանթաշովին մեկ այլ վայրում իրենց համար հող գնելու խնդրանքով: Բանն այն էր, որ քոչվոր քրդերի հաճախակի հարձակումների և ասպատակությունների պատճառով գյուղը չէր կարողանում խաղաղ ապրել: Մանթաշովը համաձայնում է, և տարածքը գնելուց հետո այստեղ տեղափոխված հայերը հիմնում են նոր գյուղ՝ այն անվանելով Մանթաշովկա՝ ի պատիվ մեծ բարերարի: Բոլշևիկյան իշխանությունները, սակայն, փոխում են անվանումը՝ այն վերանվանելով Կարմիր գյուղի: Գյուղի այս անվանումը մինչ օրս մնում է անփոփոխ: ԽՍՀՄ փլուզումից հետո գյուղի անվանումը քարտեզներում և ցուցանակներում հաճախ գրվում է ադրբեջաներեն Քըրմզըքենդի կամ վրացերեն Ծիթելիսոփելի: Կարմիր գյուղն առանձին միավոր չէ. այն մտնում է Կուլլար կամ Կուլլարի խոշորացված համայնքի մեջ, որի կազմում կա ևս 6 գյուղ:

Գյուղի բնակչությունը ավանդաբար զբաղվում է գյուղատնտեսությամբ, հիմնականում մրգերի, բանջարեղենի մշակմամբ՝ լոլիկ, վարունգ՝ սեփական կարիքների համար, կաղամբ կամ ծաղ-

[3]http://pop-stat.mashke.org/georgia-ethnic-loc2014.htm

կակաղամբ՝ մեծածախ առևտրի համար, որոնք հիմնականում գընում են Թբիլիսիից եկածները: Անասնապահությունը թույլ է զարգացած, մարդիկ հիմնականում պահում են ընտանի թռչուններ, խոզ՝ սեփական կարիքների համար: Արոտավայրեր չլինելու պատճառով գյուղում խոշոր անասունների քանակը սակավաթիվ է:

ԽՍՀՄ տարիներին գյուղի բնակիչները նյութապես ապահովված էին. մշակում էին գինու խաղողատեսակ՝ այն հանձնելով սովխոզին, աճեցրած միրգ-բանջարեղենը սեփական ավտոմեքենաներով տեղափոխում և թանկ վաճառում էին Ռուսաստանում՝ լավ եկամուտ ստանալով: Դրանից բացի՝ շրջանում գործում էին բրդի և տեխնիկական խորդենու, գինու և այլ գործարաններ, որոնցում աշխատում էր գյուղի բնակիչների մի մասը:

ԽՍՀՄ փլուզումից հետո կյանքը դժվարացել է. կա մշտական և սեզոնային արտագաղթ Ռուսաստան: Այսպիսով՝ գյուղի բնակչությունը պակասել է խորհրդային տարիների համեմատությամբ: ԽՍՀՄ փլուզմանը հաջորդող առաջին տարիներին գյուղի բնակիչները առևտրական սերտ կապեր էին պահպանում Հայաստանի հետ՝ աճեցրած մթերքը իրացնելով Հայաստանի շուկաներում, սակայն, հետագայում՝ մաքսային սահմանափակումների պատճառով, դա այլևս ձեռնտու չէ:

Ըստ Վրաստանում անցկացված մարդահամարի՝ գյուղի բնակչության թիվը 2002 եղել է 1072, իսկ 2014թ.՝ 695[4], որոնցից հայերի թիվը նշված է 680: Սակայն, ըստ տեղացիների, այդ թիվը պետք է լինի 1000-ի սահմաններում. գյուղն ամբողջովին հայաբնակ և հայախոս է. հայերից բացի՝ գյուղում ապրում է մեկ ասորի ընտանիք՝ նույնպես հայախոս[5]: Գյուղում, բացի հայկական դրպրոցից, այլ կրթական հաստատություն երբեք չի եղել, իսկ այն հատուկենտ աշակերտները, որոնք ստացել են ռուսական կրթություն, ստիպված հաճախել են Շուլավեր կայարանի ռուսական դպրոցը[6]: Այժմ գյուղաբնակ ոչ մի երեխա չի հաճախում ռուսական դպրոց:

[4] http://pop-stat.mashke.org/georgia-ethnic-loc2014.htm

[5] Կարմիր գյուղի միջնակարգ դպրոցի տնօրեն Հմայակ Սայադյանի հաղորդմամբ:

[6] Հմայակ Սայադյանի հաղորդմամբ:

Ներկայումս Կարմիր գյուղի դպրոցն են հաճախում նաև հարևան գյուղերի հայ երեխաները, ուր հայերը փոքրամասնություն են կազմում, և հայկական դպրոցներ չկան։ Օրինակ՝ Իմիր կամ Իմիրի ադրբեջանական գյուղի հայկական թաղամասում բնակվող հայ երեխաները հաճախում են հենց Կարմիր գյուղի դպրոցը։ Այսպիսի աշակերտների թիվը մոտ 10 է։ Դպրոցի աշակերտների ընդհանուր քանակը՝ 136[7]։

Խորհրդային ժամանակներից սկսած՝ դպրոցում միշտ դասավանդվել է վրացերեն։ Սակայն ինչպես նշում են գյուղի բնակիչները, նախկինում վրացերենի դասավանդումը ավելի շատ ձևական բնույթ էր կրում (օրինակ, ինչպես, անգլերենը ԽՍՀՄ դպրոցներում)[8]։ Վրացերենը դասավանդվում էր շաբաթը 2-3 անգամ, և շրջանավարտները այդ լեզվի միայն տարրական գիտելիքներ ունեին, գյուղի բնակչությունը վրացերենին չէր տիրապետում, իսկ վրացախոս բնակչության բացակայությունը շրջակայքում չէր նպաստում այդ լեզուն յուրացնելուն։

Վրաստանի անկախությունից ի վեր, սակայն, գյուղի դպրոցում պետական լեզվի՝ վրացերենի դասավանդման դրվածքը զգալիորեն փոխվել է, խորացել։ Բայց հարկ է նշել, որ սա տեղի չի ունենում հայոց լեզվի հաշվին[9]։ Առարկաների այն խումբը, որի մեջ մտնում է վրացերենը, կոչվում է «Վրացերենը իբրև երկրորդ լեզու», և ներառում է վրացերենն և գրականությունը։ Այս առարկաների խումբը երեխաներն այժմ անցնում են շաբաթական 5 ժամ[10]։ Գյուղի դպրոցի տնօրեն Հմայակ Սայադյանի խոսքերով այժմ երիտասարդ սերունդը և մասնավորապես դպրոցականները վրացերենին անհամեմատ ավելի լավ են տիրապետում։

Գյուղից դուրս օտարազգիների հետ շփվելիս ավագ և միջին սերնդի բնակիչները խորհրդային ժամանակներում և այժմ էլ կի-

---

[7] Հմայակ Սայադյանի հաղորդմամբ։

[8] Գյուղի բնակիչներ Կարեն և Արթուր Միքայելյանների և Օվսաննա Ասատուրյանի բանավոր հաղորդմամբ։

[9] Հմայակ Սայադյանի հաղորդմամբ։

[10] Հմայակ Սայադյանի հաղորդմամբ։

բառում են ռուսերենը, ադրբեջանցիների (ադրբեջանցիներին տեղի հայերը «թուրք» են անվանում) հետ շփվելիս՝ ադրբեջաներենը:

Այս առումով հետաքրքիր է նշել, որ գյուղի բնակիչները, հատկապես ավագ և միջին սերնդի մարդիկ, գտնվելով ադրբեջանցիների շրջապատում, հեշտորեն սովորում են ադրբեջաներեն և տեղացի ադրբեջանցիների հետ խոսում այդ լեզվով: Խոսքը, անշուշտ, խոսակցական լեզվի մասին է, որն անհրաժեշտ է կենցաղային մակարդակով շփման համար (առևտուր, ծառայություններ և այլն):

1970-ական թվականներին տարածված էր մի երևույթ, երբ գյուղի տարեցները հաճախ իրար հետ շփվելիս խոսում էին ադրբեջաներեն («թուրքերեն»):

Գյուղի խոսվածքի վերաբերյալ կարելի է ասել, որ այն, մեր կարծիքով, ընդհանուր առմամբ, քիչ է տարբերվում Արարարտյան բարբառից: Երբեմն կարելի է զգալ Լոռու շեշտադրությունը, երբ շեշտը դրվում է նախավերջին վանկի վրա, օգտագործվում են վրացերեն և ադրբեջաներենից փոխառյալ բառեր: Մյուս կողմից՝ կարելի է նաև լսել, օրինակ, «կերամ», «գրեցիմ» բարբառային ձևերը: 70-ականներին որոշ բնակիչների շուրթերից կարելի էր լսել «էթասեմ, էթասես» բայաձևերը. միջին սերունդը, սակայն, այդ ձևերն այլևս չի օգտագործում:

Մոտ գտնվելով Հայաստանին՝ գյուղի բնակիչները սերտ կապեր ունեն հատկապես Լոռու մարզի հետ. դպրոցի այն շրջանավարտները, որոնք ձգտում են բարձրագույն կրթություն ստանալ, հաճախ ընդունվում են Վանաձորի և Երևանի բուհեր, փորձում աշխատանք գտնել և հիմնվել այդ քաղաքներում: Երբեմն գյուղի երիտասարդները «աղջիկ են ուզում» Հայաստանի սահմանամերձ շրջաններից:

Պետք է նշել, որ Կարմիր գյուղի բնակիչները ձգտում են գյուղը լիովին հայաբնակ պահպանել, ուստի տներ վաճառողներին պարտադրում են այն վաճառել միայն հայերին՝ աչքի առջև ունենալով այլ՝ նախկինում հայաբնակ, իսկ այժմ խառը բնակչություն ունեցող գյուղերի օրինակները:

ԽՍՀՄ ժամանակներում մի բնակչուհու նախաձեռնությամբ գյուղում գործել է մի փոքրիկ մատուռ, այժմ այն վերանորոգվել է: Մշտական քահանա չկա, գյուղի բնակիչները հիմնականում առաջնորդվում են վրացական տոնացույցով, սակայն վերջին տարիներին սա փոխվում է և նախապատվությունը տրվում է հայկական տոնացույցին[11]:

Մառնեուլի շրջանում կան նաև մասամբ հայաբնակ գյուղեր, ինչպես, օրինակ, Նորգյուղը (նախկինում Միրզոյնկա), որում հայերը մեծամասնություն են կազմում. ադրբեջանցիների թիվը 22% է, Բուդյոնովկայում հայերը 55% են, արբեջանցիները՝ 34%, Ծոբ գյուղը, ուր հայերը փոքրամասնություն են կազմում՝ 34%, ադրբեջանցիները՝ 62%, Խոժոռնի հայերը՝ 78%, ադրբեջանցիները՝ 22%:

Հետաքրքիր է դիտարկել այժմ գրեթե ամբողջովին ադրբեջանական, իսկ նախկինում նաև մասամբ հայաբնակ Մամեյը կամ Կիրովկան: Գյուղի անվանումը ճանապարհային ցուցանակին վրացերեն է՝ «Քերովկա», ճիշտ անվանումը պետք է լինի Կիրովկա՝ խորհրդային գործիչ Սերգեյ Կիրովի պատվին: Մառնեուլի շրջանի բնակիչների շրջանում գյուղը հայտնի է Մամեյ անվամբ: Մամեյն ընդամենը 11 կիլոմետր հեռավորության վրա է գտնվում Հայաստանի սահմանից: Այստեղ այժմ ադրբեջանցիների շրջապատում շարունակում է ապրել չորս հայ ընտանիք: Գյուղի բնակչության թիվը 663 մարդ է՝ ըստ 2014 թ.՝ Վրաստանի մարդահամարի[12]: Գյուղի հայ բնակիչների մի մասը 1950-1970-ականներին տեղափոխվել է Հայաստան և կամ Վրաստանի այլ բնակավայրեր:

Մինչև 1975-1976 թթ. Մամեյում գործել է հայկական միջնակարգ դպրոց ադրբեջանականի հետ միասին, սակայն հետագայում հայերի թվի նվազման պատճառով այն փակվել է[13]:

Մամեյի բնակիչ Սամվել Հայրապետյանի հաղորդմամբ՝ գյուղում հայկական դպրոց չլինելու պատճառով իր երեխաները

[11] Հմայակ Սայադյանի հաղորդմամբ:
[12] http://pop-stat.mashke.org/georgia-ethnic-loc2014.htm
[13] Գյուղի նախկին բնակիչ Մարգարիտ Հայրապետյանի հաղորդմամբ:

ստիպված հաճախում են Գյուլլիբաղ գյուղի հայկական դպրոցը՝ ամեն օր անցնելով 24 կիլոմետր ճանապարհ։

Մամեյի փոքրաթիվ հայ ընտանիքները շարունակում են շփվել հայերեն, իսկ տեղի ադրբեջանցիների հետ՝ ադրբեջաներեն։ Սամվել Հայրապետյանի խոսքով՝ ինքն այնքան է յուրացրել ադրբեջաներենը, որ իրեն չճանաչող ադրբեջանցիները գլխի չեն ընկնում, որ հայ է, եթե հատուկ չի ասվում։ Կա և հակառակ երևույթը. Մամեյի ադրբեջանցիների միջին և ավագ սերնդի շատ ներկայացուցիչներ գիտեն հայերեն, որը սովորել են գյուղի երբեմնի հայ բնակիչներից։

Այժմ Մառնեուլիի շրջանում տարածված է մի նոր երևույթ. ադրբեջանաբնակ գյուղերում հիմնվում են վրացական դպրոցներ, և ադրբեջանցի շատ երեխաներ հաճախում են այդ դպրոցները։ Դրանից բացի՝ ադրբեջանցի շատ երեխաներ հաճախում են վրացական գյուղերի կամ Մառնեուլի քաղաքի վրացական դպրոցներ՝ պետական լեզվին տիրապետելու և Վրաստանի հասարակության մեջ ավելի լավ ինտեգրվելու նպատակով[14]։ Պետական լեզվին տիրապետելը այժմ ավելի կարևոր է տեղի բնակչության համար, քան խորհրդային տարիներին։

Դաշտային հարցումներով կարելի է փաստել, որ հետխորհրդային փուլում դիտարկելի էր մի երևույթ. անցյալում վրացաբնակ գյուղերն այստեղ սակավաթիվ էին. ընդամենը երեքը՝ Թամարիսի, Ծերեթելի, Օրջոնոիկիձե (սրանք ստեղծվել են 1950-ականներին Վրաստանի արևմտյան լեռնային շրջաններից վերաբնակեցված վրացիների հաշվին[15]), մինչդեռ 1990-ականների սկզբին հիմնվում էին վրացական նոր բնակավայրեր։ Այսպիսի քաղաքանություն էր վարում Զվիադ Գամսախուրդիայի կառավարությունը։ Այսպես, օրինակ, 1990-ականների սկզբին և Կարմիր գյուղի անմիջական հարևանությամբ Աջարիայից վերաբնակեցվել են աջարներ, և հիմնադրվել է Մարադիսի բնակավայրը, որի

[14] Մամեյի բնակիչ Սամվել Հայրապետյանի հաղորդմամբ։ **A. Kvakhadze**, *Georgia's Fertile Crescent: Marneuli Municipality*, 2021, p. 5.

[15] **Kvakhadze**, p. 7.

բնակիչների հետ հայ հարևանները բարիդրացիական հարաբերություններ ունեն: Մարադիսիի հիմնադրման համար Կարմիր գյուղի անմիջապես հարևանությամբ գտնվող սովխոզի, սակայն ոչ Կարմիր գյուղին պատկանող խաղողի այգիները կտրվեցին: Ըստ մարդահամարի՝ Մարադիսիի բնակչությունը կազմում է 239 մարդ[16]:

Այսպիսի վրացաբնակ գյուղերի շարքում կարելի է նշել Շահումյան ավանի հարևանությամբ հիմնադրված Խիխանին (այն հիմնադրվել է 1950-ականներին և շատ փոքր բնակավայր է), Սադախլո-Թբիլիսի մայրուղու վրա գտնվող Մարեթին[17] և Դիոկնիսին[18]:

Այսպիսով՝ Կարմիր գյուղի օրինակով կարելի է ասել, որ Վրաստանի Մառնեուլի շրջանի հայաբնակ գյուղերը շարունակում են պահպանել իրենց ինքնությունը, լեզուն՝ միևնույն ժամանակ իրենց ընկալելով որպես Վրաստանի քաղաքացիներ: Հայապահպանությանը նպաստող կարևոր գործոններից են Հայաստանին մոտ լինելու հանգամանքը, գյուղի բազմազան սերտ կապերը Հայաստանի հետ: Ցանակալի է, որ այդ կապերը առավել սերտացվեն, ուսումնասիրվեն գյուղերի հայ բնակչության ինքնության պահպանմանն առնչվող խնդիրները, և հնարավորության դեպքում աջակցություն տրամադրվի: Օրինակ՝ նշվեց, որ Կարմիր գյուղն ունի փոքր մատուռ, սակայն հոգևորականները այցելում են գյուղ տոներին՝ պատարագ մատուցելու[19]: Ոչ տոնական օրերին բնակչությունը, որը հայ Սուրբ Առաքելական Եկեղեցու հետևորդ է, ստիպված են գնալ Շահումյան ավան կամ Թբիլիսի՝ եկեղեցական արարողություններին մասնակցելու: Երբեմն բնակիչները հոգևորականների են հրավիրում մատուռում կնունքի, պսակադրության, հուղարկավորության արարողություններ իրականացնելու նպատակով: Ցանկալի է, որ վերականգնվի գյուղի հիմնականում հայալեզու գրականությամբ հագեցած գրադարանը,և կամ տարբեր

---

[16] http://pop-stat.mashke.org/georgia-ethnic-loc2014.htm

[17] **Kvakhadze**, p. 17.

[18] **Kvakhadze**, p. 33.

[19] Գյուղի բնակիչ Սվետլանա Միքայելյանի բանավոր հաղորդմամբ:

տեսակի օժանդակություն տրամադրվի դպրոցին: Ուսումնասիրված չէ նաև գյուղին վերաբերող ազգագրական նյութը:

Օգտագործված գրականություն

Մաթևոսյան Ռ., Ծոբոփոր, *Հայկական սովետական հանրագիտարան*, Հ.5, 1979:
Kvakhadze, A., *Georgia's Fertile Crescent: Marneuli Municipality*, Rondeli Foundation, Georgian Foundation for Strategic and International Studies,2021.

Mikayelyan Tigran – The Linguistic Situation in Armenian-Populated villages of Marneuli Municipality of Georgia(On Example of Karmir Gyugh Village). – In his paper the author describes the linguistic situation in the Armenian-populated villages in mostly Azerbaijani-dominated Marneuli municipality of Kvermo-Kartli administrative region of the Republic of Georgia on the example of KarmirGyugh village (often denoted as Kransoe, Kirmizikend or TsiteliSopeli).KarmirGyugh village has always been fully Armenian-populated and Armenian-speaking; an Armenian secondary school has been functioning here since the USSR. The Georgian language was taught since the Soviet times but rather in formal way and the alumni had only elementary knowledge of that language. However, today the teaching of the Georgian language has improved significantly and the younger generation knows Georgian much better compared to older people. The old and middle-aged generations continue contacting with the non-Armenians in Russian and in Azerbaijani with the surrounding Azerbaijani majority.Another village former partially Armenian-populated, but now almost fully Azerbaijani-populated is Mamey (or Kirovka), where a few Armenian families continue to live, is also discussed.

Keywords: Armenians, Armenian language, Marneuli, Krasnoe, Mamey, Armenian-populated, Georgia

Mikayelyan Tigran, Institute of Oriental Studies of National Academy of Sciences of Armenia, Researcher. mtigran2002@yahoo.com

Микаелян Тигран - Языковая ситуация в армянских селах Марнеульского муниципалитета Грузии (на примере Красного Села).- Автор на примере Красного села приводит языковую ситуацию в армянских селах в Марнеульском муниципалитете региона Квемо-Картли Грузии, населенного азербайджанским большинством. Население села всегда оставалось полностью армянским и армяноязычным, тут с советских времен действует армянская средняя школа.Также с с советских времен в школе преподается грузинский язык, но впрошлом его изучение носило формальный характер и выпускники имели элементарные знания по данному языку. Однако, сегодня преподавание грузинского языка значительно улучшилось и молодое поколение владеет им намного лучше чем люди среднего и старшего возраста. Старшее поколение в общении с неармянами пользуется русским и азербайджанским языком (при общении с местными азербайджанцами). Также приводится ситуация в селе Мамей некогда частично армянонаселенном, а ныне почти полностью населенном азербайджанцами, где продолжают жить несколько армянских семей.

Ключевые слова: армяне, армянский язык, Марнеули, Красное Село, Мамей, армянонаселенный, Грузия

Микаелян Тигран, Институт востоковедения НАН Республики Армения, научный сотрудник. mtigran2002@yahoo.com